Արձանագրություն N 2
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/54 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04.02.2020թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Ջուլֆալակյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գասպարյան, Ա. Մարտիրոսյան, Խ. Մարկոսյան, Լ. Մուրադյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Թ.Հովեսյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/54» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Լ. Ջուլֆալակյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 01.02.2020թ. ժամը 18:36-ին «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/54» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է պարզաբանում այն է.

Հարգելի գնահատող հանձնաժողով՝

Խնդրում ենք հստակեցնել սյուն մրցույթի 1,2,3,6,7,17,18,26,28,36,50,54,55,56,58,59,60-րդ չափաբաժիններում նշված հետևյալ կետերը՝

- Մարզական և տեխնիկական գույքի տեսակները և քանակները
- Արդյոք միջոցառումների ավարտից հետո մարզական և տեխնիկական գույքը հարկավոր է տեղափոխել Պատվիրատուին:

1.2 գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է հետևյալ պատասանը.

Ի պատասխան Ձեր Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման նպատակով ԵՔ-ԳՀԾՁԲ-20/54 ծածկագրով ընթացակարգի հետ կապված պարզաբանման վերաբերյալ հարցման, տեղեկացնում ենք, որ.

- մարզական և տեխնիկական գույքի տեսակները և քանակները.

Հարցի հետ կապված չափաբաժիններում նախատեսվում է այն գույքը, որն անհրաժեշտ է մարզական տվյալ միջոցառման կազմակերպման և անցկացման համար, այն է Երևան քաղաքի առաջնությունների անցկացման համար, յուրաքանչյուր մարզաձև ունի իր անհրաժեշտ մասնագիտական ու տեխնիկական գույքը, որպես օրինակ ներկայացնեմ վոլեյբոլ մարզաձևը, որի մրցման անցկացման համար անհրաժեշ են գնդակներ, միջազգային մրցումային չափանիշներին համապատասխան վոլեյբոլի ցանց, կամ ցանցեր /կապված մասնակից թիմերի քանակից/, համապատասխան գծանշումներով և առաստաղի համապատասխան բարձրությամբ մարզադահլիճ, տեխնիկական գույքը մարզադահլիճի մաքրության ապահովման համար նախատեսված նյութերն ու գույքն են /լաթեր, հատակի փայտ, ավել, գոգաթիակ, մրցավարների համար սեղաններ, աթոռներ և այլն/ ավելի մանրամասնություններ կարող եք ստանալ համապատասխան մարզաձևերի ֆեդերացիաներում, ընդ որում մասնագիտական մարզական գույքը լինում է մրցումային և մարզումային նպատակների համար, տվյալ դեպքում ընդունելի է մրցումային նպատակին համապատասխանող գույքը, իսկ քանակները պայմանավորվում են տվյալ մարզական միջոցառման մասնակիցների քանակով /բոլոր չափաբաժիններում ակնկալվում է մինչև 12 թիմերի մասնակցություն/, ինչը հայտնի է դառնում մրցումներից առնվազն քսան օր առաջ:

Զանգվածային ու գործընկեր քաղաքների մարզական միջոցառումների մարզական ու տեխնիկական գույքի տեսակներն ու քանակները պայմանավորվում են միջոցառումների սցենարներով ու բանակցային գործընթացի ընթացքում, այն արտացոլվում է տվյալ միջոցառումից առնվազն մեկ ամիս առաջ հաստատվող կանոնակարգում:

- Արդյոք միջոցառումների ավարտից հետո մարզական և տեխնիկական գույքը հարկավոր է տրամադրել Պատվիրատուին

Պատվիրատուին որևէ գույք չի տրամադրվում, քանի որ այն հանդիսանում է ծառայություններ մատուցողի սեփականությունը, բացառություն է կազմում միայն մարզահանդերձանքը, ինչը տրվում է մարզիկներին, մարզիչներին, ներկայացուցիչներին ու ընդհանրապես մարզական պատվիրակության անդամներին: Ծառայություններ մատուցողի հայեցողությամբ պատվիրակության անդամներին մարզահանդերձանքը կարող է հանձնվել յուրաքանչյուրի, կամ մեկ ներկայացուցչի ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Լ. Ջուլֆալակյան

Ա. Գասպարյան

Անդամներ՝ Ա. Մարտիրոսյան

Խ. Մարկոսյան

Լ. Մուրադյան

Քարտուղար՝ Թ.Հովեսյան